տակամած չէնքն, յայտնի ապացոյց էին լսածնե-
րուս։ Կարող չեղայ մտացս մէջ համաձայնելու այդ
երկու հակասական իրքն՝ վանք՝ հոգևորականաց
կրթութեան տեղի՝ և միանգամայն հասարակաց
զբօսարան։ Թէպէտ և եղան զրուցողներ որ վանքը
այն առթիւ բաւական շահ կը ստանայ, այլ ես
զրուցեցի, (և միայն իրաւամբ կարծեմ և արդարու-
թեամբ) թէ պէտք չէ այն շահը՝ որ դպրաց բա-
րոյական վնասովն լինի։ Կարելի է սխալիմ, ըն-
թերցողն կարող է դատաստան կտրել։ Ընդհան-
րապէս Նախիջևանու Սուրբ Խաչը շունի վսեմ
կերպարանքը, ինչ որ կ'ընծայէ ցայսօր Սուրբ Նշան
Ղրիմու որոյ վրայ կ'արժէ համառօտիւ խօսիլ առ-
թիւս։

Ղրիմեցի վանքին հին կոչումը Սուրբ Նշան է,
չենած յառաջին կէս ԺԴ դարու Ճենովացւոց Ղրի-
մու տիրապետութեան միջոց, ոչ հեռի Սուրխաթ
քաղաքէն իւր անտառին մէջը Կաղարաթ կոչուած
մեծ աւանին վրայ, ուր նստելով թեմական առաջ-
նորդք, հինգ հարիւր տարուան միջոց կառավարել
են թերակղզւոյս հայասեռ ժողովուրդը։ Կաղա-
րաթ մեծ աւանը՝ ծուխ կամ վիճակ եղած է Սուրբ
Նշանի, որոյ ցարդ մնացած քարուքանդ դերբուկ-
ները՝ վկայ են զրուցածիս։ Ցիշատակարան մի
յանուանէ կը յիշէ հայաբնակ քաղաքներն և գե-
ղերը, որք էին ընդ իշխանութեամբ Սուրբ Նշանի
արքեպիսկոպոսին, և իրենց առատ տրովք վերա-
նորոգել են զՍուրբ Նշան. ինչպէս հայասեռ ժո-
ղովուրդք « Կաֆայու, Ղարասուայու, Պաղչասարա-
յու, Կէօզլէվու բոլոր գիւղօրէիքն, հանդերձ Ղաւ-
չանաւն... 'ի ժամանակս առաջնորդութեան Ադա-
մայ արքեպիսկոպոսի կղզւոյս »։ Ի Սուրղաթէ